ՀՖՖ ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

2025թ. խմբագրություն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Սահմանումներ 4
Գլուխ I. Ընդհանուր կանոններ ... 7
Հոդված 1. Նպատակներ ... 7
Հոդված 2. Գործողությունների շրջանակ ... 8
Հոդված 3. ՀՖՖ Ֆուտբոլային Գործակալների կանոնակարգ ... 8
Գլուխ II. Ֆուտբոլային Գործակալ դառնալու պահանջները ... 10
Հոդված 4. Ընդհանուր դրույթներ ... 10
Հոդված 5. Իրավասություն ... 10
Հոդված 6. Քննության ընթացակարգ ... 12
Հոդված 7. Արտոնագրի վճար ... 12
Հոդված 8. Արտոնագրի շնորհումը ... 12
Հոդված 9. Շարունակական մասնագիտական զարգացում ... 12
Հոդված 10. Արտոնագրի գործողության կասեցման կամ դադարեցման հայտ ... 13
Հոդված 11. ՖԻՖԱ-ի արտոնագրի կիրառումը ՀՖՖ իրավասության տարածքում ... 13
Հոդված 12. Իրավասության չափանիշներին համապատասխանություն ... 13
Գլուխ III. Ֆուտբոլային Գործակալի գործունեությունը ... 14
Հոդված 13. Ընդհանուր դրույթներ ... 14
Հոդված 14. Ներկայացուցչական համաձայնագիր ... 14
Հոդված 15. Անչափահասներ ... 17
Հոդված 16. Ծառայության վճար- ընդհանուր սկզբունքներ ... 18
Հոդված 17. Ծառայության վճարի շեմը ... 20
Հոդված 18. Իրավունքներն ու պարտականությունները ... 22
Հոդված 19. Համապատասխանելիություն արտոնագրման ընթացիկ պահանջներին ... 26
Գլուխ IV. Հաճախորդների իրավունքներն ու պարտականությունները ... 28
Հոդված 20. Ֆուտբոլային Գործակալների ներգրավումը ... 28
Գլուխ V. Բացահայտում և հրապարակում ... 31
Հոդված 21. Բացահայտում և հրապարակում ... 31
Գլուխ VI. Վեճեր ... 32
Հոդված 22. Իրավասություն ... 32
Գլուխ VII. Կարգապահական հարցեր ... 33
Հոդված 23. Իրավասություն և գործադրում ... 33
Գլուխ VIII. Եզրափակիչ դրույթներ ... 36
Հոդված 24. Անցումային դրույթներ ... 36
Հոդված 25. Նախկինում արտոնագրված գործակալներ ... 36
Հոդված 26. Ազգային օրենսդրության արտոնագրման համակարգերի ճանաչում ... 37
Հոդված 27. Ֆուտբոլային Գործակալների աշխատանքային խումբ ... 38
Հոդված 28. Չնախատեսված հարցեր ... 39
Հոդված 29. Պաշտոնական լեզուներ ... 39
Հոդված 30. Ուժի մեջ մտնելը ... 39

## ՀՖՖ ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ		
Խմբագրություն 2025	Ուժի մեջ է՝ 30.06.2025թ. -ից	Հաստատված է ՀՖՖ Գործադիր կոմիտեի կողմից 30.06.2025թ. -ին

Սահմանումներ

Սույն Կանոնակարգում կիրառվում են ՖԻՖԱ կանոնադրությունում, ՀՖՖ կանոնադրությունում, ՖԻՖԱ և ՀՖՖ Ֆուտբոլիստների կարգավիճակի և տեղափոխության կանոնակարգերում, և վերաբերելի կանոնակարգերում տեղ գտած, ինչպես նաև ստորև նշված սահմանումները:

1. **Գործակալություն -** իրավաբանական անձ, որն աշխատանքի է վերցնում, ընդգրկում և պահպանում Ֆուտբոլային Գործակալներին կամ հանդես է գալիս որպես մեկ կամ մի քանի Ֆուտբոլային Գործակալների համար առևտրային գործունեության միջոց:
2. **Կապ** – ա) հաճախորդի հետ ցանկացած ֆիզիկական, անձնական կամ էլեկտրոնային հաղորդակցության միջոցներով շփում, բ) ցանկացած ուղղակի կամ անուղղակի կապ հաճախորդի հետ՝ առնչվող այլ անձի կամ կազմակերպության հետ, ինչպիսիք են օրինակ՝ ընտանիքի անդամները կամ ընկերները, կամ գ) ցանկացած գործողություն, երբ Ֆուտբոլային Գործակալն օգտագործում կամ ուղղորդում է մեկ այլ անձի կամ կազմակերպության իր անունից կապվել հաճախորդի հետ վերոնշյալ ա) և բ) կետերով նկարագրված ձևով:
3. **Հաճախորդ**- ակումբ, ֆուտբոլիստ, մարզիչ կամ առանձնացված (single-entity) լիգա, որը կարող է ներգրավել Ֆուտբոլային Գործակալին՝ Ֆուտբոլային Գործակալի Ծառայություններ մատուցելու նպատակով:
4. **Կապակցված Ֆուտբոլային Գործակալ**- Ֆուտբոլային Գործակալ, ով կապված է այլ Ֆուտբոլային Գործակալի հետ՝

   ա) միևնույն Գործակալությունում աշխատելու կամ վերջինիս հետ պայմանագրային հարաբերություններ ունենալու արդյունքում, որի միջոցով էլ իրականացվում են Ֆուտբոլային Գործակալների ծառայություններ
   բ) Ֆուտբոլային Գործակալների Ծառայություններ իրականացնող միևնույն Գործակալության տնօրեններ, բաժնետերեր կամ համասեփականատերեր լինելու արդյունքում
   գ) միմյանց հետ ամուսնացած, տնային գործընկերներ, քույր-եղբայրներ կամ ծնողներ և երեխաներ կամ խորթ զավակներ լինելու արդյունքում
   դ) ցանկացած պայմանագրային կամ այլ պայմանավորվածության արդյունքում, լինի դա պաշտոնական կամ ոչ պաշտոնական, ծառայություններ մատուցելիս մեկից ավելի անգամ համագործակցելու կամ ծառայությունների մատուցումից ստացված եկամուտը կամ շահույթը կիսելու արդյունքում:

5. **Ձեռքբերող/ ներգրավող կազմակերպություն-** ակումբ, անդամ ասոցիացիա կամ առանձնացված (single-entity) լիգա, որը կարող է ներգրավել ֆուտբոլիստ կամ մարզիչ:

6. **Ֆուտբոլային Գործակալ-** Ֆուտբոլային Գործակալի ծառայություններ մատուցելու նպատակով ՖԻՖԱ-ի կողմից արտոնագրված ֆիզիկական անձ:
7. **Ֆուտբոլային Գործակալի Ծառայություններ-** Հաճախորդի համար կամ Հաճախորդի անունից իրականացված ֆուտբոլային ծառայություններ, ներառյալ ցանկացած բանակցություն, հաղորդակցություն, որը վերաբերում է նույն կամ հարակից այլ գործունեությանը, որի նպատակը կամ մտադրությունը գործարք կնքելն է:
8. **Անհատ**- ֆուտբոլիստ կամ մարզիչ:
9. **Շահույթ**- ա) իրավաբանական անձի ցանկացած շահառու սեփականություն, որի միջոցով իրականացվում է տվյալ սուբյեկտների համապատասխան գործունեությունը՝ բացառությամբ հասարակ և ազատ հասանելիություն ունեցող, չփոխանցվող անձնական անդամակցության, որն ակումբում մեկ ձայնի իրավունք է տալիս սեփականատիրոջը և/կամ բ) գտնվելով այն դիրքում, որը կարող է հնարավորություն ընձեռել ուղղակիորեն կամ անուղղակի, պաշտոնապես կամ ոչ պաշտոնապես նյութական, ֆինանսական, կոմերցիոն, վարչական, կառավարչական կամ ցանկացած այլ տեսակի ազդեցություն ունենալ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց գործունեության վրա:
10. **Այլ ծառայություններ-** Ֆուտբոլային Գործակալի ծառայություններից դուրս հաճախորդի համար կամ նրա անունից Ֆուտբոլային Գործակալի կողմից իրականացված ծառայություններ, որոնք ներառում, բայց չեն սահմանափակվում իրավաբանական խորհրդատվությամբ, ֆինանսական պլանավորմամբ, scouting-ի հարցերով, խորհրդատվությամբ, իմիջային իրավունքների կառավարմամբ և առևտրային պայմանագրերի շուրջ բանակցություններով:
11. **Հարթակ-** ՖԻՖԱ-ի կողմից շահագործվող թվային հարթակ, որի միջոցով տեղի են ունենում արտոնագրման, վեճերի լուծման, շարունակական մասնագիտական զարգացման գործընթացները և հաշվետվությունը:
12. **Կանոնակարգ-** սույն Ֆուտբոլային Գործակալների կանոնակարգը, որը փոփոխվում է ժամանակ առ ժամանակ:
13. **Ազատ արձակող կազմակերպություն-** այն ակումբը, անդամ ասոցիացիան կամ առանձնացված (single entity) լիգան, որը ֆուտբոլիստը կամ մարզիչը լքում է Ձեռքբերող կազմակերպությունում աշխատանքի անցնելու և/կամ գրանցվելու նպատակով:
14. **Վարձատրություն-** աշխատանքային պայմանագրով սահմանված համախառն ֆինանսական փախհատուցում աշխատանքի դիմաց, որը ներառում է հիմնական աշխատավարձը, պայմանագրի կնքման վճարը, ցանկացած այլ գումար, որը ենթակա է վճարման որոշակի պայմանների բավարարման դեպքում (օր.՝ մրցելույթային հավելավճար): Տարակարծությունից խուսափելու համար ցանկացած ապագա տրանսֆերային փոխհատուցումը և աշխատավարձի հետ չառնչվող նպաստներն, ինչպիսիք են՝ փոխադրամիջոցի, բնակության, հեռախոսակապի տրամադրման

ծառայությունները, ներառված չեն համախառն ֆինանսական փոխհատուցման հաշվարկի մեջ:

15. **Ներկայացուցչական համաձայնագիր-** Ֆուտբոլային Գործակալի Ծառայություններ տրամադրելու համար իրավահարաբերություն հաստատելու նպատակով կնքված գրավոր համաձայնագիր:
16. **ՖԿՏԿ-** ՀՖՖ Ֆուտբոլիստների կարգավիճակի և տեղափոխության կանոնակարգ, որը փոփոխվում է ժամանակ առ ժամանակ:
17. **Ֆուտբոլային միջնորդների հետ աշխատելու մասին կանոնակարգ-** ՀՖՖ Ֆուտբոլային միջնորդների հետ աշխատելու մասին կանոնակարգը:
18. **Առանձնացված (Single-Entity) լիգա-** անդամ ասոցիացիային կցված կազմակերպություն, որը կազմակերպում է լիգայի (կամ լիգաների) աշխատանքը և ներկայացնում է իր ակումբների ընդհանուր շահերը (օր.՝ գործելով՝ որպես բոլոր ակումբների ֆուտբոլիստների գործատու):
19. **Հատուկ/ նշված գործարք-** գործարք, որում ներգրավված բոլոր կողմերը սահմանված և բացահայտված են:
20. **Գործարք-** ա) ֆուտբոլիստի աշխատանքի ընդունումը, գրանցումը կամ գրանցումից հանումը ակումբում կամ single-entity լիգայում, բ) մարզչի աշխատանքի ընդունումը ակումբում, single-entity լիգայում կամ անդամ ասոցիացիայում, գ) ֆուտբոլիստի գրանցման տեղափոխությունը մեկ ակումից մեկ այլ ակումբ, դ) անհատի աշխատանքային պայմանների ստեղծումը, դադարեցումը կամ փոփոխումը:

Ծանոթագրություն. [1] *Ֆիզիկական անձանց առնչվող տերմինները վերաբերում են թե՛ իգական, թե՛ արական սեռերին: Յուրաքանչյուր եզակի հասկացությունը կիրառվում է նաև հոգնակի տարբերակով և հակառակը:*

[2] *Եթե այլ բան նախատեսված չէ սույն Կանոնակարգում, օգտագործված հասկացություններն ունեն նույն իմաստը, ինչպես սահմանված է ՀՖՖ կանոնադրությամբ և ՀՖՖ, ՖԻՖԱ, ՈՒԵՖԱ կանոնակարգերով:*

Գլուխ I. Ընդհանուր կանոններ

Հոդված 1. Նպատակներ

1. ՀՖՖ-ն՝ որպես ՖԻՖԱ անդամ, կանոնադրությամբ ամրագրված պարտավորություն ունի ֆուտբոլային տրանսֆերային համակարգին վերաբերող բոլոր հարցերը կարգավորելու գործում: Ֆուտբոլային տրանսֆերային համակարգի հիմնական նպատակներն են՝

   ա) պաշտպանել պրոֆեսիոնալ ֆուտբոլիստների և ակումբների միջև պայմանագրային կայունությունը,
   բ) խրախուսել երիտասարդ ֆուտբոլիստների մարզումը,
   դ) խթանել միասնականության ոգին էլիտար և մասսայական ֆուտբոլի միջև,
   ե) պաշտպանել անչափահասներին,
   զ) պահպանել մրցակցային հավասարակշռությունը, և
   է) ապահովել սպորտային մրցաշարերի կանոնավոր ընթացքը:

2. Ֆուտբոլային Գործակալի գործունեության կանոնակարգումը երաշխավորում է, որ Ֆուտբոլային Գործակալի վարքագիծը համապատասխանի ֆուտբոլային տրանսֆերային համակարգի հիմնական նպատակներին և ներքոնշյալ նպատակներին՝

   ա) Ֆուտբոլային Գործակալի աշխատանքի համար նվազագույն պրոֆեսիոնալ և էթիկական չափանիշների սահմանում,
   բ) Ֆուտբոլային Գործակալների կողմից հաճախորդներին մատուցվող ծառայությունների որակի ապահովում արդար և ողջամիտ ծառայությունների վճարներով, որոնք կիրառելի են հավասարապես,
   դ) շահերի բաշխման սահմանափակում՝ հաճախորդներին ոչ բարոյական վարքագծից պաշտպանելու նպատակով,
   ե) ֆինանսական և վարչական թափանցիկության բարելավում,
   զ) ֆուտբոլիստների պաշտպանություն, ովքեր ունեն փորձի պակաս և լավ տեղեկացված չեն ֆուտբոլային տրանսֆերային համակարգի մասին,
   է) ֆուտբոլիստների, մարզիչների և ակումբների միջև պայմանագրային կայունության բարելավում,
   ը) վիրավորական, ավելորդ և սպեկուլյատիվ գործողությունների կանխարգելում:

Հոդված 2. Գործողությունների շրջանակ

1. Սույն Կանոնակարգով ղեկավարվում է Ֆուտբոլային Գործակալների գործունեությունը ՀՖՖ իրավասության ներքո գտնվող տարածքում: Կանոնակարգով կարգավորվում են՝

   ա) ազգային մակարդակի բոլոր Ներկայացուցչական համաձայնագրերը,
   բ) ներքին տրանսֆերի կամ ազգային մակարդակի Գործարքի հետ կապված ցանկացած գործունեություն:

2. Ներկայացուցչական համաձայնագիրը համարվում է ազգային մակարդակի, եթե

   ա) այն ղեկավարում է Ֆուտբոլային Գործակալի ծառայությունները Հատուկ գործարքի առնչությամբ, որը կապված է ՀՖՖ իրավասության ներքո գտնվող ներքին տրանսֆերի հետ (կամ մարզչի տեղափոխությունը երկու ակումբների միջև, որոնք երկուսն էլ անդամակցում են ՀՖՖ-ին, կամ ՀՖՖ-ին անդամակցող ակումբի և ՀՖՖ-ի ներկայացուցչական հավաքականի միջև) կամ
   բ) այն ղեկավարում է Ֆուտբոլային Գործակալի ծառայությունները մեկից ավելի Հատուկ գործարքների առնչությամբ, որոնցից մեկը կապված է միջազգային տրանսֆերի հետ (կամ մարզչի տեղափոխությունը երկու ակումբների միջև, որոնք երկուսն էլ անդամակցում են ՀՖՖ-ին, կամ ՀՖՖ-ին անդամակցող ակումբի և ՀՖՖ-ի ներկայացուցչական հավաքականի միջև):

3. Սույն Կանոնակարգը կիրառվում է նաև այն Ներկայացուցչական Համաձայնագրերի վրա, որոնք կարգավորում են ֆուտբոլային գործակալի ծառայությունները, չեն առնչվում միջազգային տրանսֆերին վերաբերող Հատուկ գործարքների հետ, և որոնց շրջանակում Հաճախորդը Ներկայացուցչական Համաձայնագրի ստորագրման պահին գրանցված է կամ ունի մշտական բնակության վայր ՀՖՖ իրավասության ներքո գտնվող տարածքում :

Հոդված 3. ՀՖՖ Ֆուտբոլային Գործակալների կանոնակարգ

1. ՀՖՖ Ֆուտբոլային Գործակալների կանոնակարգը համապատասխանում է ՖԻՖԱ Ֆուտբոլային Գործակալների կանոնակարգին (այսուհետ՝ ՖԻՖԱ Կանոնակարգ): Մասնավորապես, այն՝

   ա) հղումով ներառում է ՖԻՖԱ կանոնակարգի 11-21-րդ հոդվածները,

բ) ներառում է հղումներ ազգային օրենսդրության ցանկացած պարտադիր տարրի,

գ) իրավասություն է տալիս ազգային մակարդակի մարմնին ցանկացած վեճերի քննման և որոշման հարցում՝ համաձայն ՖԻՖԱ կանոնակարգի, և

դ) իրավասություն է տալիս ազգային մակարդակի մարմնին կարգապահական միջոցների դիմելու հարցում, ինչպես սահմանված է ՖԻՖԱ-ի կանոնակարգով։

2. ՀՖՖ Ֆուտբոլային Գործակալների կանոնակարգում ՀՖՖ-ն կարող է կիրառել ավելի խիստ միջոցներ, քան կիրառվում են ՖԻՖԱ կանոնակարգի 11-21-րդ հոդվածներով։ Դրանք կարող են տարբերվել նաև այն դրույթներից, որտեղ վերջիններս հակասում են Հայաստանի տարածքում կիրառելի օրենսդրության ավելի խիստ պարտադիր դրույթներին։
3. ՖԻՖԱ-ի հարցման դեպքում ՀՖՖ-ն պետք է ՖԻՖԱ-ի ուսումնասիրությանը տրամադրի ՀՖՖ Ֆուտբոլային Գործակալների կանոնակարգը։

Գլուխ II. Ֆուտբոլային Գործակալ դառնալու պահանջները

Հոդված 4. Ընդհանուր դրույթներ

1. Ֆիզիկական անձը կարող է դառնալ Ֆուտբոլային Գործակալ, եթե՝

   ա) լրացրել և ՖԻՖԱ-ի հատուկ հարթակով ուղարկել է արտոնագիր ստանալու ամբողջական դիմում,
   բ) բավարարում է իրավասության պահանջներին,
   գ) հաջողությամբ հանձնել է ՖԻՖԱ-ի կողմից անցկացվող քննությունը,
   դ) ՖԻՖԱ-ին վճարել է Ֆուտբոլային Գործակալ դառնալու տարեկան վճարը։

2. Ֆուտբոլային Գործակալի արտոնագրի համար դիմում ներկայացնելիս՝ դիմորդը համաձայնվում է ենթարկվել ՀՖՖ և ՖԻՖԱ Ֆուտբոլային Գործակալների կանոնակարգերին, ՀՖՖ և ՖԻՖԱ Կանոնադրությանը, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգին և ՖԻՖԱ Էթիկայի կանոնագրքին, ՖԻՖԱ Կարգապահական կանոնագրքին և ՖԻՖԱ ու ՀՖՖ Ֆուտբոլիստների կարգավիճակի և տեղափոխության կանոնակարգերին, որոնք հրապարակված են համապատասխանաբար՝ ՀՖՖ և ՖԻՖԱ www.ffa.am և www.fifa.com պաշտոնական կայքերում։

Հոդված 5. Իրավասություն

1. Դիմորդը պետք է՝

   ա) արտոնագրի համար դիմում ներկայացնելիս (ինչպես նաև արտոնագիրը ստանալուց հետո)
      - չներկայացնի կեղծ, ապակողմնորոշիչ կամ թերի հայտարարություններ իր դիմումի մեջ,
      - երբեք ենթարկված չլինի քրեական պատասխանատվության, ներառյալ կազմակերպված հանցագործության, թմրանյութերի շրջանառության/թրաֆիքինգի, կաշառակերության, փողերի լվացման, հարկային պարտավորություններից խուսափելու, խարդախության, կազմակերպված խաղերում ներգրավվածության, միջոցների յուրացման, փոխակերպման, հավատարմության խախտման, կեղծիքի, իրավական անօրինականության, սեռական բռնության, այլ հանցագործությունների, ոտնձգությունների, անչափահաս երեխաների կամ խոցելի խմբում գտնվող չափահասների թրաֆիքինգի դեպքերը,

- սպորտային ղեկավար մարմնի կամ ցանկացած կարգավորող մարմնի կողմից երբեք ենթարկված չլինի երկու կամ ավելի տարով կասեցման, որակազրկման կամ հեռացման էթիկայի և պրոֆեսիոնալ վարքագծի կանոններին չենթարկվելու համար,
- չլինի ՖԻՖԱ-ի, կոնֆեդերացիայի, անդամ ասոցիացիայի, լիգայի, ակումբի, ակումբների և լիգաների շահերը ներկայացնող մարմնի կամ նման կազմակերպությունների և իրավաբանական անձանց հետ ուղղակիորեն կամ անուղղակի ձևով կապված կազմակերպության պաշտոնյա կամ աշխատակից: Միակ բացառությունը այս պարագայում հանդիսանում է այն դեպքը, երբ դիմորդը նշանակվել կամ ընտրվել է ՖԻՖԱ մարմիններից որևէ մեկում, կոնֆեդերացիայում կամ անդամ ասոցիացիայում՝ Ֆուտբոլային Գործակալների շահերը ներկայացնելու համար:
- անձամբ կամ գործակալության միջոցով շահագրգռվածություն չունենա ակումբի, ակադեմիայի, լիգայի կամ single-entity լիգայի նկատմամբ:

բ) գործակալի արտոնագրման հայտը ներկայացնելու ժամկետից առաջ 24 ամսվա ընթացքում ներգրավված չլինի առանց համապատասխան արտոնագրի Ֆուտբոլային Գործակալի ծառայությունների մատուցման մեջ:

գ) արտոնագրման հայտը ներկայացնելուն նախորդող 5 տարվա ընթացքում (և հետագայում՝ այդ թվում՝ արտոնագիր ստանալուց հետո) երբեք սնանկ ճանաչված չլինի, չլինի իրեն սնանկ հայտարարած բիզնեսի մեծամասնական բաժնետեր, տնօրեն կամ հիմնական պաշտոնակատար և/ կամ չենթարկվի լուծարման

դ) արտոնագրման հայտը ներկայացնելուն նախորդող 12 ամսվա ընթացքում (և հետագայում՝ այդ թվում՝ արտոնագիր ստանալուց հետո) որևէ փոխկապվածություն չունենա ցանկացած կազմակերպությունում կամ ընկերությունում, որը կազմակերպում կամ իրականացնում է սպորտային խաղադրույքներ, որի միջոցով սպորտային իրադարձության արդյունքի վրա խաղադրույք է դրվում գումար շահելու նպատակով:

2. Դիմորդը պետք է բավարարի իրավասության պահանջները՝

ա) արտոնագրի համար դիմում ներկայացնելու պահին՝ քննություն հանձնելու համար,

բ) արտոնագիր ստանալուց հետո մշտապես՝ համաձայն Կանոնակարգի հոդված 17-ի:

3. ՖԻՖԱ Գլխավոր քարտուղարությունը պատասխանատու է իրավասության պահանջներին չենթարկվելու դեպքերը քննելու համար:

Հոդված 6. Քննության ընթացակարգ

1. Դիմորդի կողմից իրավասության պահանջները բավարարելու արդյունքում՝ ՖԻՖԱ-ն հնարավորություն է ընձեռում դիմորդին մասնակցելու ՖԻՖԱ-ի գործակալ դառնալու քննությանը, որը սկսած 2025թ.-ից տեղի է ունենալու առցանց տարբերակով (օնլայն)՝ տարին մեկ անգամ:

2. Քննությունների անցկացման հաճախականությունն ու օրերը որոշվում են ՖԻՖԱ-ի կողմից և հաղորդվում շրջաբերականով:

3. Քննությունն իրենից ներկայացնում է ՖԻՖԱ-ի կողմից կազմված բազմակի ընտրության թեստ, որը ստուգում և գնահատում է դիմորդների գիտելիքները՝ ֆուտբոլային կանոնակարգերի վերաբերյալ:

Հոդված 7. Արտոնագրի վճար

1. Եթե դիմորդը հաջողությամբ հանձնում է քննությունը, ապա վերջինս պետք է ՖԻՖԱ-ին վճարի արտոնագրի տարեկան գումարը:
2. Արտոնագրի տարեկան վճարի վերաբերյալ պահանջները յուրաքանչյուր տարվա ընթացքում հաղորդվում են շրջաբերականով:
3. Դիմորդը պետք է վճարի արտոնագրի տարեկան վճարը քննությունը հանձնելուց հետո 90 օրվա ընթացքում: Վճարումը սահմանված ժամկետում չկատարելու դեպքում դիմորդի հայտը և քննության արդյունքները չեղյալ են հայտարարվում:

Հոդված 8. Արտոնագրի շնորհումը

1. Արտոնագիրը շնորհվում է ֆիզիկական անձին անժամկետ՝ համաձայն Կանոնակարգի հոդված 19-ի: Արտոնագիրը և դրանով շնորհված իրավունքներն ու պարտականությունները հանդիսանում են անձի հետ անխզելիորեն կապված և չեն կարող փոխանցվել այլ անձի: Այն հնարավորություն է տալիս Ֆուտբոլային Գործակալին իրականացնել Ֆուտբոլային Գործակալի ծառայություններ ամբողջ աշխարհով:

Հոդված 9. Շարունակական մասնագիտական զարգացում

1. Արտոնագիրը պահպանելու նպատակով Ֆուտբոլային Գործակալը պետք է ամեն տարի համապատասխանի շարունակական մասնագիտական զարգացման պահանջներին:
2. Շարունակական մասնագիտական զարգացման պահանջները հաղորդվում են ամեն տարի շրջաբերականի միջոցով:

Հոդված 10. Արտոնագրի գործողության կասեցման կամ դադարեցման հայտ

1. Ֆուտբոլային Գործակալը կարող է պահանջել իր արտոնագրի գործողության ժամանակավոր կասեցում կամ մշտական դադարեցում՝ Ֆուտբոլային Գործակալների գրանցման հարթակում հիմնավորված հայտ ներկայացնելով:
2. Նախկինում իր արտոնագիրը կասեցրած Ֆուտբոլային Գործակալը ապագայում կարող է զբաղվել նույն գործունեությամբ միայն արտոնագրի հայտի ամբողջական գործընթացն անցնելուց հետո՝ ինչպես նկարագրված է սույն Կանոնակարգում:

Հոդված 11. ՖԻՖԱ-ի արտոնագրի կիրառումը ՀՖՖ իրավասության տարածքում

1. ՖԻՖԱ-ի կողմից տրված արտոնագիրը ֆուտբոլային գործակալին իրավասություն է տալիս ֆուտբոլային գործակալի ծառայություններ մատուցելու ՀՖՖ իրավասության ներքո գտնվող տարածքում: Ֆուտբոլային գործակալը, որը ծառայություններ է մատուցում ՀՖՖ իրավասության տարածքում, ենթակա է սույն Կանոնակարգին, ինչպես նաև ՀՖՖ-ի բոլոր այն նորմատիվ ակտերին, որոնք վերաբերում են ֆուտբոլային գործակալներին:

Հոդված 12. Իրավասության չափանիշներին համապատասխանություն

1. ՀՖՖ-ն պարտավոր է ՖԻՖԱ-ին հաղորդել ֆուտբոլային գործակալի կամ դիմորդի կողմից սույն Կանոնակարգի 5-րդ հոդվածով սահմանված իրավասության պահանջներին չհամապատասխանելու վերաբերյալ ցանկացած կասկած կամ տեղեկություն:
2. ՀՖՖ-ն պետք է համագործակցի ՖԻՖԱ-ի հետ՝ քննության գործընթացում սույն կանոնակարգի 5-րդ հոդվածով սահմանված իրավասության պահանջների հնարավոր խախտման վերաբերյալ՝ ներկայացնելով իր տրամադրության տակ եղած կամ ՖԻՖԱ-ի կողմից պահանջված ամբողջ համապատասխան տեղեկատվությունը:

Գլուխ III. Ֆուտբոլային Գործակալի գործունեությունը

Հոդված 13. Ընդհանուր դրույթներ

1. Միայն Ֆուտբոլային Գործակալը կարող է մատուցել Ֆուտբոլային Գործակալի Ծառայություններ:
2. Ֆուտբոլային Գործակալը պետք է միշտ բավարարի սույն Կանոնակարգի հոդված 5-ով սահմանված իրավասության պահանջներին:
3. Ֆուտբոլային Գործակալն իր գործարարական գործունեությունն իրականացնում է Գործակալության միջոցով: Գործակալության կողմից վարձված, Ֆուտբոլային Գործակալ չհանդիսացող աշխատակիցներն ու պայմանագրային աշխատողները չեն կարող մատուցել Ֆուտբոլային Գործակալի Ծառայություններ կամ որևէ մոտեցում ցուցաբերել հնարավոր հաճախորդին Ներկայացուցչական համաձայնագիր կնքելու համար: Ֆուտբոլային Գործակալը լիարժեք պատասխանատվություն է կրում Գործակալության, իր աշխատակիցների, պայմանագրային աշխատողների կամ այլ ներկայացուցիչների վարքագծի համար, եթե վերջիններս խախտեն սույն Կանոնակարգը:
4. Հետևյալ ֆիզիկական և իրավաբանական անձինք չեն կարող փոխկապակցվածություն ունենալ Ֆուտբոլային Գործակալի կամ Գործակալության գործունեության մեջ՝

   ա) Հաճախորդներ
   բ) սույն Կանոնակարգի հոդված 5-ով սահմանված ցանկացած անձ, ով իրավասու չէ դառնալ Ֆուտբոլային Գործակալ
   գ) ցանկացած անձ կամ կազմակերպություն, որն ուղղակիորեն կամ անուղղակի ձևով տիրապետում է ֆուտբոլիստի գրանցման հետ կապված իրավունքներին՝ խախտելով ՀՖՖ Ֆուտբոլիստների կարգավիճակի և տեղափոխության կանոնակարգի 18[1] կամ 18[2] հոդվածները:

Հոդված 14. Ներկայացուցչական համաձայնագիր

1. Ֆուտբոլային Գործակալը կարող է Ֆուտբոլային Գործակալի Ծառայություններ մատուցել Հաճախորդին միայն տվյալ Հաճախորդի հետ գրավոր Ներկայացուցչական համաձայնագիր կնքելուց հետո:
2. Միայն Ֆուտբոլային Գործակալը կարող է հնարավոր Հաճախորդին մոտեցում ցուցաբերել կամ վերջինիս հետ կնքել Ներկայացուցչական

համաձայնագիր՝ Ֆուտբոլային Գործակալի Ծառայություններ մատուցելու վերաբերյալ:

3. Անհատի և Ֆուտբոլային Գործակալի միջև կնքված Ներկայացուցչական համաձայնագիրը չի կարող գերազանցել 2 տարին: Այս ժամկետը կարող է երկարաձգվել միայն նոր Ներկայացուցչական համաձայնագիր կնքելու միջոցով: Ցանկացած ավտոմատ նորացվող դրույթ կամ այլ դրույթ, որը նախատեսում է Ներկայացուցչական համաձայնագրի երկարաձգում իր առավելագույն ժամկետից, համարվում է անվավեր/ առոչինչ:
4. Ֆուտբոլային Գործակալը կարող է միայն մեկ Ներկայացուցչական համաձայնագիր կնքել միևնույն Անհատի հետ: Անհատի հետ ներկայացուցչական համաձայնագիր կնքելուց առաջ կամ Անհատի հետ գործող Ներկայացուցչական համաձայնագրում փոփոխություններ կատարելուց առաջ Ֆուտբոլային Գործակալը պետք է՝

   ա) գրավոր տեղեկացնի Անհատին, որ Ներկայացուցչական համաձայնագրի առնչությամբ իրենք պետք է հաշվի առնեն անկախ իրավաբանական խորհրդատվություն ստանալու հնարավորությունը,
   բ) ստանա Անհատի գրավոր հաստատումը առ այն, որ իրենք արդեն ստացել են կամ որոշել են չօգտվել անկախ իրավաբանական խորհրդատվությունից:

5. Ձեռքբերող կազմակերպության կամ Ազատ արձակող կազմակերպության և Ֆուտբոլային Գործակալի միջև կնքված Ներկայացուցչական համաձայնագիրը ենթակա չէ առավելագույն տևողության:
6. Ֆուտբոլային Գործակալը ձեռքբերող կազմակերպության կամ Ազատ արձակող կազմակերպության հետ կարող է կնքել մի քանի Ներկայացուցչական համաձայնագրեր, եթե տվյալ համաձայնագրերը վերաբերում են տարբեր Գործարքների:
7. Ներկայացուցչական համաձայնագիրը համարվում է վավեր, եթե այն ներառում է հետևյալ նվազագույն պահանջները՝

   ա) ներգրավված կողմերի անուն, ազգանունը,
   բ) գործողության ժամկետը (եթե կիրառելի է),
   գ) Ֆուտբոլային Գործակալին՝ իր մատուցած ծառայությունների համար վճարվելիք գումար,
   դ) Ֆուտբոլային Գործակալի կողմից տրամադրվող ծառայությունների բնույթը,
   ե) կողմերի ստորագրությունը:

8. Ֆուտբոլային Գործակալը կարող է մատուցել Ֆուտբոլային Գործակալի Ծառայություններ կամ այլ ծառայություններ գործարքում ներգրավված մեկ կողմի համար՝ բացառությամբ ստորև նշված կետի՝

   ա) Թույլատրվող երկակի ներկայացուցչություն- Ֆուտբոլային Գործակալը կարող է մատուցել Ֆուտբոլային Գործակալի Ծառայություններ կամ այլ ծառայություններ նույն գործարքում ներգրավված Անհատի և Ձեռքբերող կազմակերպության համար, եթե նախօրոք ստացվել է երկու կողմերի գրավոր համաձայնությունը:

9. Ֆուտբոլային Գործակալը չի մատուցում Ֆուտբոլային Գործակալի Ծառայություններ կամ այլ ծառայություններ միևնույն գործարքում ներգրավված հետևյալ կողմերի համար՝

   ա) Ազատ արձակող կազմակերպության և Անհատի, կամ
   բ) Ազատ արձակող և Ձեռքբերող կազմակերպության, կամ
   գ) միևնույն Գործարքում ներգրավված բոլոր կողմերի:

10. Ֆուտբոլային Գործակալը և կապակցված Ֆուտբոլային Գործակալը պետք է չմատուցի Ֆուտբոլային Գործակալի Ծառայություններ կամ այլ ծառայություններ միևնույն Գործարքում ներգրավված տարբեր հաճախորդների համար՝ բացառությամբ համաձայն սույն հոդվածի 8-րդ կետի:
11. Ֆուտբոլային Գործակալի Ծառայությունների մատուցման արդյունքում կնքված Գործարքի ցանկացած տրանսֆերային կամ աշխատանքային համաձայնագրում պետք է նշվի Ֆուտբոլային Գործակալի անունը, իրենց հաճախորդը, իրենց՝ ՖԻՖԱ-ի արտոնագրի համարը և ստորագրությունը:
12. Հաճախորդը կարող է ներգրավվել բանակցությունների մեջ և Գործարք կնքել առանց Ֆուտբոլային Գործակալի մասնակցության: Այս պարագայում սրա մասին անհրաժեշտ է հստակ նշել համապատասխան տրանսֆերային կամ աշխատանքային համաձայնագրում:
13. Անվավեր է համարվում ներկայացուցչական համաձայնագրում ներառված ցանկացած դրույթ, որը

   ա) սահմանափակում է Անհատի ինքնուրույն բանակցելու և առանց Ֆուտբոլային Գործակալի ներգրավվման աշխատանքային պայմանագիր կնքելու իրավունքը, և/ կամ
   բ) պատժամիջոցներ է կիրառում Անհատի նկատմամբ, եթե վերջինս ինքնուրույն բանակցում և առանց Ֆուտբոլային Գործակալի ներգրավվման կնքում է աշխատանքային պայմանագիր:

14. Կողմերից յուրաքանչյուրը կարող է ցանկացած ժամանակ լուծել Ներկայացուցչական համաձայնագիրը, եթե առկա է հիմնավոր դրդապատճառ այն լուծելու համար: Ներյացուցչական համաձայնագիրն առանց հիմնավոր դրդապատճառի չեղյալ հայտարարող կամ լուծող կողմը պետք է փոխհատուցի հակառակ կողմին պատճառված վնասի համար: Ներկայացուցչական համաձայնագիրը լուծելու համար հիմնավոր դրդապատճառ է, եթե կողմը, համաձայն բարեխղճության սկզբունքի, այլևս չի կարող շարունակել պայմանագրային հարաբերությունը մինչև համաձայնեցված ժամկետը: Սա ներառում է, հետևալ իրավիճակները, բայց չի սահմանափակվում դրանցով՝

ա) Ֆուտբոլային Գործակալի արտոնագրի հետկանչում կամ կասեցում,
բ) ցանկացած ֆուտբոլային գործունեությամբ զբաղվելու արգելք,
գ) Ազգային կամ միջազգային մակարդակով նոր ֆուտբոլիստներ գրանցելու արգելք առնվազն մեկ ամբողջական գրանցման ժամանակահատվածի ընթացքում:

Հոդված 15. Անչափահասներ

1. Ֆուտբոլային Գործակալի կողմից մատուցվող ծառայությունների առնչությամբ անչափահասի կամ վերջինիս օրինական ներկայացուցչի հետ կարելի է գործնական կապ հաստատել (և/կամ ներկայացուցչական համաձայնագրի հետագա կատարման ժամանակ) ոչ ավել քան անչափահասի՝ առաջին պրոֆեսիոնալ պայմանագիրը ստորագրելու անհրաժեշտ տարիքը լրանալուց 6 ամիս առաջ՝ համաձայն այն երկրի կամ տարածքի կիրառելի օրենքի, որտեղ անչափահասը աշխատանքի կանցնի: Գործնական կապը կարող է հաստատվել միայն, եթե գործակալը նախօրոք ստացել է անչափահասի օրինական ներկայացուցչի գրավոր համաձայնությունը:
2. Ֆուտբոլային Գործակալը, ով անչափահասի մասնակցությամբ Գործարքում ցանկանում է ներկայացնել անչափահասի կամ ներգրավված ակումբի շահերը, պետք է նախևառաջ հաջողությամբ ավարտի անչափահասների առնչությամբ Շարունակական մասնագիտական զարգացման կուրսը և ենթարկվի անչափահասին ներկայացնելու վերաբերյալ ցանկացած պահանջին՝ ամրագրված այն երկրի կամ անդամ ասոցիացիայի տարածքի կիրառելի օրենքով, որտեղ անչափահասը աշխատանքի է անցնելու:
3. Ֆուտբոլային Գործակալի և անչափահասի միջև կնքված պայմանագիրը համարվում է գործողության ուժ ունեցող, եթե

ա) Ներկայացուցչական համաձայնագիրը բավարարում է Կանոնակարգի հոդված 14-ի 7-րդ կետով սահմանված նվազագույն պահանջներին,
բ) Ֆուտբոլային Գործակալը կատարել է սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերը
գ) Ներկայացուցչական համաձայնագիրը ստորագրվել է անչափահասի և վերջինիս օրինական խնամակալի կողմից, ինչպես նախատեսված է այն երկրի կամ անդամ ասոցիացիայի տարածքի կիրառելի օրենքով, որտեղ անչափահասը աշխատանքի է անցնելու:

4. Սույն հոդվածի 1-ին կետի ցանկացած խախտում պատժվում է նվազագույնը տուգանքով և 2 տարի ժամկետով Ֆուտբոլային Գործակալի արտոնագրի կասեցումով:

Հոդված 16. Ծառայության վճար- ընդհանուր սկզբունքներ

1. Ֆուտբոլային Գործակալը կարող է Հաճախորդից պահանջել ծառայության վճար՝ ըստ Ներկայացուցչական համաձայնագրով համաձայնեցված կարգի:
2. Ներկայացուցչական համաձայնագրով սահմանված ծառայության վճարը բացառապես վճարվում է Ֆուտբոլային Գործակալի Հաճախորդի կողմից: Հաճախորդը չի կարող պայմանագրային հարաբերություններ հաստատել կամ լիազորել ցանկացած երրորդ կողմի նման վճարում կատարելու համար:
3. Սույն հոդվածի 2-րդ կետով սահմանված սկզբունքից միակ բացառությունն այն է, երբ Ֆուտբոլային Գործակալը ներկայացնում է Անհատի, և նրանց համաձայնեցված տարեկան վարձատրությունը 200000 ԱՄՆ դոլարից (կամ համարժեք այլ արժույթից) քիչ է (կամ հավասար)՝ չհաշված պայմանական վճարումները: Նման դեպքերում Ձեռքբերող կազմակերպությունը կարող է համաձայնության գալ անհատի հետ տվյալ Գործարքի ծառայության վճարը իրենց կողմից Ֆուտբոլային Գործակալին վճարելու հարցում՝ համաձայն Ներկայացուցչական համաձայնագրի: Ներքոնշյալ բոլոր պայմանները պետք է կիրառվեն՝

ա) Անհատի անունից Ձեռքբերող կազմակերպության կողմից կատարված ծառայության գումարի վճարումը պետք է չազդի Անհատի նկատմամբ Ֆուտբոլային Գործակալի հավատարմության վրա: Այն պետք է նաև չստեղծի Ֆուտբոլային Գործակալի որևէ կախվածություն կամ ենթակայություն Ձեռքբերող կազմակերպությունից:
բ) Անհատի անունից Ձեռքբերող կազմակերպության կողմից կատարված ծառայության գումարի վճարումը պետք է չգերազանցի անհատի և Ֆուտբոլային Գործակալի միջև կնքված Ներկայացուցչական համաձայնագրով համաձայնեցված ծառայության վճարը:

գ) Ձեռքբերող կազմակերպությունը չի կարող Անհատի վարձատրությունից հանել ծառայության վճարը, որը կատարվել է՝ համաձայն սույն հոդվածի 3-րդ կետի:

4. Ծառայության վճարը պետք է վճարվի Ֆուտբոլային Գործակալին հաշիվ-ապրանքագրի հիման վրա:
5. Ֆուտբոլային Գործակալն իրավասու է ստանալ իր ծառայությունների համար սահմանված վճարը, միայն եթե վճարը վերաբերում է Ներկայացուչական համաձայնագրով նախօրոք սահմանված ծառայություններին, և Ներկայացուցչական համաձայնագիրը ուժի մեջ է տվյալ ֆուտբոլային ծառայությունների մատուցման պահին:

ա) Այն դեպքում, երբ աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետն ավելի երկար է Ներկայացուցչական համաձայնագրի ժամկետից, Ֆուտբոլային Գործակալը կարող է ստանալ իր ծառայության վճարը Ներկայացուցչական համաձայնագրի գործողության ժամկետի լրանալուց հետո, եթե Անհատի աշխատանքային պայմանագիրը դեռևս ուժի մեջ է և պայմանով, որ սա համաձայնեցված է Հաճախորդի հետ Ներկայացուցչական համաձայնագրում:

6. Ցանկացած ծառայության գումարի վճարումը պետք է կատարվի համապատասխան գրանցման ժամանակահատվածի ավարտից հետո և մասնաբաժիններով՝ յուրաքանչյուր 3 ամիսը մեկ աշխատանքային պայմանագրի տևողության ընթացքում:
7. Միայն Անհատի կողմից փաստացի ստացված վարձատրության դեպքում է վճարվում համամասնորեն հաշվարկված ծառայության վճարը:
8. Այն դեպքում, երբ աշխատանքային պայմանագիրը կնքվում է 6 ամսից պակաս ժամկետով, վճարումը պետք է կատարվի մեկ մասնաբաժնով (ամբողջությամբ) աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետի ավարտին:
9. Ֆուտբոլային Գործակալը կարող է ծառայության վճար չստանալ, երբ ներգրավված է անչափահասի առնչությամբ Ֆուտբոլայիին Գործակալի Ծառայություններ մատուցելու համար, քանի դեռ համապատասխան ֆուտբոլիստը չի ստորագրել իր առաջին կամ հետագա պրոֆեսիոնալ պայմանագիրը՝ համաձայն այն երկրի կամ անդամ ասոցիացիայի տարածքի կիրառելի օրենքով, որտեղ անչափահասը աշխատանքի է անցնելու:
10. Եթե Ֆուտբոլային Գործակալը միևնույն գործարքն իրականացնելիս՝ հանդես է գալիս Ձեռքբերող կազմակերպության և Անհատի անունից՝ համաձայն սույն Կանոնակարգի հոդված 14-ի 8 ա) կետի (թույլատրելի երկակի

ներկայացուցչություն), ապա Ձեռքբերող կազմակերպությունը կարող է վճարել ծառայության ընդհանուր գումարի մինչև 50%-ը:

11. Ազատ արձակող կազմակերպությունը պետք է ծառայության գումարը վճարի Ֆուտբոլային Գործակալին, Ազատ արձակող կազմակերպությանը վճարման ենթակա տրանսֆերային փոխհատուցման յուրաքանչյուր մասնաբաժնի վճարումը ստանալուց հետո: Ազատ արձակող կազմակերպությունը պետք է պատշաճ կերպով տեղեկացնի Ֆուտբոլային Գործակալին բոլոր նմանատիպ վճարումներ ստանալուց հետո:
12. Ֆուտբոլային Գործակալն իրավասու չէ ստանալ դեռևս չվճարված ծառայության մատուցման որևէ վճար, որը բխում է բանակցված աշխատանքային պայմանագրից, որտեղ՝

    ա) Անհատը տեղափոխվում է այլ Ձեռքբերող կազմակերպություն մինչև աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետի ավարտը, կամ
    բ) աշխատանքային պայմանագիրը առանց հիմնավոր դրդապատճառի վաղօրոք լուծվում է Անհատի կողմից, և Ֆուտբոլային Գործակալը լուծման պահին դեռևս ներկայացնում է տվյալ անհատին:

13. Ֆուտբոլային Գործակալներին վճարվող ծառայության մատուցման բոլոր վճարումները պետք է կատարվեն ՖԻՖԱ-ի՝ Վճարումները վերահսկող մարմնի կողմից՝ համաձայն ՖԻՖԱ-ի՝ Վճարումները վերահսկող մարմնի վերաբերյալ կանոնակարգի:

    ա) Եթե ՖԻՖԱ-ի՝ Վճարումները վերահսկող մարմնի վերաբերյալ կանոնակարգը չի կարգավորում Ֆուտբոլային Գործակալներին՝ ծառայության գումարների վճարումները, երբ սույն Կանոնակարգը ուժի մեջ է մտնում, ապա վճարումը պետք է կատարվի անմիջապես Ֆուտբոլային Գործակալին մինչև այն պահը, երբ ՖԻՖԱ-ի՝ Վճարումները վերահսկող մարմնի վերաբերյալ կանոնակարգը կկարգավորի ծառայության գումարների վճարումները:

Հոդված 17. Ծառայության վճարի չեմը

1. Մատուցված ֆուտբոլային ծառայությունների դիմաց Ֆուտբոլային Գործակալին վճարվող ծառայության վճարը պետք է հաշվարկվի հետևյալ կերպ՝

ա) Անհատին կամ Ձեռքբերող կազմակերպությանը ներկայացնելիս՝ Անհատի վարձատրության հիմքով,

բ) Ազատ արձակող կազմակերպությանը ներկայացնելիս՝ համապատասխան Գործարքի տրանսֆերային փոխհատուցման հիմքով:

2. Գործարքում Ֆուտբոլային Գործակալի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող առավելագույն ծառայության վճարը՝ անկախ այն հանգամանքից, թե թվով քանի Ֆուտբոլային Գործակալ է հաճախորդին տրամադրում Ֆուտբոլային Գործակալի ծառայություններ, պետք է լինի ըստ հետևալ սանդղակի՝

ՍԱՆԴՂԱԿ

Հաճախորդ	Ծառայության վճարի չեմ	
	Անհատի տարեկան վարձատրությունը 200 000 դոլարից քիչ է կամ հավասար (կամ համարժեք)	Անհատի տարեկան վարձատրությունը 200 000 դոլարից շատ է (կամ համարժեք)
Անհատ	Անհատի վարձատրության 5 %-ը	Անհատի վարձատրության 3 %-ը
Ձեռքբերող կազմակերպություն	Անհատի վարձատրության 5 %-ը	Անհատի վարձատրության 3 %-ը
Ձեռքբերող կազմակերպություն և անհատ (թույլատրելի երկակի ներկայացուցչություն)	Անհատի վարձատրության 10 %-ը	Անհատի վարձատրության 6 %-ը
Ազատ արձակող կազմակերպություն (տրանսֆերային փոխհատուցում)	Տրանսֆերային փոխհատուցման 10%-ը	

Կասկածից խուսափելու համար, գործում է հետևյալը՝

ա) Անհատի վարձատրության համապատասխան ծառայության վճարի չեմը հաշվարկելու նպատակով հաշվի չի առնվում որևէ պայմանական վճարում,

բ) Եթե Անհատի վարձատրությունը գերազանցում է 200,000 ԱՄՆ դոլարը (կամ համարժեք է դրան), այդ գումարի տարեկան ավելցուկը պետք է համապատասխանի ծառայության վճարի 3%-ի շեմին, եթե Ֆուտբոլային Գործակալը ներկայացնում է Անհատին կամ Ձեռքբերող կազմակերպությանը, կամ 6%-ին, եթե Ֆուտբոլային Գործակալը ներկայացնում է երկուսին էլ՝ և՛ Ձեռքբերող կազմակերպությանը, և՛ Անհատին (թույլատրվող երկակի ներկայացուցչություն)։

գ) Տրանսֆերային փոխհատուցման հաշվարկը կարող է չներառել՝

- ՖԿՏԿ կանոնակարգի հոդված 17-ի կամ Հավելված 2-ի համաձայն պայմանագրի դրույթները խախտելու համար վճարվող ցանկացած փոխհատուցում,
- ցանկացած հետագա վաճառքի վճար։

3. Եթե Ֆուտբոլային Գործակալը կամ կապակցված Ֆուտբոլային Գործակալը գործարքից 24 ամիս առաջ կամ դրանից հետո գործարքի մեջ ներգրավված հաճախորդին մատուցում է այլ ծառայություններ, ենթադրվում է, որ այդ այլ ծառայությունները եղել են այդ գործարքում իրականացված Ֆուտբոլային Գործակալի ծառայությունների մի մասը, եթե հակառակը չի ապացուցվում։
4. Այն դեպքում, եթե Ֆուտբոլային Գործակալը և/ կամ Հաճախորդը չեն մերժում սույն հոդվածի 3-րդ կետով սահմանված ենթադրությունը, այլ ծառայությունների համար վճարվող գումարը համարվում է տվյալ գործարքում մատուցված Ֆուտբոլային Գործակալի ծառայությունների վճարի մի մաս։

Հոդված 18. Իրավունքներն ու պարտականությունները

1. Ֆուտբոլային Գործակալը կարող է՝

ա) Ֆուտբոլային Գործակալի ծառայություններ մատուցել ցանկացած Հաճախորդի, որը կատարում է սույն Կանոնակարգի հոդված 14-ով սահմանված նվազագույն պահանջները պարունակող գրավոր Ներկայացուցչական համաձայանգրի պայմանները։

բ) կապ չհաստատել այն հաճախորդի հետ, ով բացառիկ Ներկայացուցչական համաձայնագրով կապված է մեկ այլ Ֆուտբոլային Գործակալի հետ՝ բացառությամբ տվյալ բացառիկ Ներկայացուցչական համաձայնագրի վերջին երկու ամսիների ընթացքում։

գ) Ներկայացուցչական համաձայնագիր չկնքել այն հաճախորդի հետ, ով բացառիկ Ներկայացուցչական համաձայնագրով կապված է մեկ այլ Ֆուտբոլային Գործակալի հետ՝ բացառությամբ տվյալ բացառիկ ներկայացուցչական համաձայնագրի վերջին երկու ամսիների ընթացքում:

2. Ֆուտբոլային Գործակալը պետք է՝

ա) միշտ գործի իր հաճախորդի (հաճախորդների) լավագույն շահերից ելնելով,
բ) հարգի և ենթարկվի ՖԻՖԱ-ի, կոնֆեդերացիաների և ՀՖՖ կանոնադրությանը, կանոնակարգերին, հրահանգներին և իրավասու մարմինների որոշումներին,
գ) Ֆուտբոլային Գործակալի Ծառայություններ մատուցելիս խուսափի շահերի բախումից,
դ) հավաստիանա, որ իր Ֆուտբոլային Գործակալի Ծառայությունների մատուցման արդյունքում կնքված պայմանագրերում առկա է իր անունը, արտոնագրի համարը, ստորագրությունը և իր հաճախորդի անունը,
ե) արտոնագրման ամբողջ ընթացքում միշտ բավարարի սույն Կանոնակարգի հոդված 5-ով և հոդված 19-ով սահմանված իրավասության պահանջներին,
զ) մինչև Հարթակում նշված վերջնաժամկետը ՖԻՖԱ-ին վճարի տարեկան արտոնագրման վճարը, ինչպես սահմանված է սույն Կանոնակարգի հոդված 7-ով և հոդված 19-ով,
է) համապատասխանի սույն Կանոնակարգի հոդված 9-ով և հոդված 19-ով սահմանված Շարունակական մասնագիտական զարգացման պահանջներին,
ը) համապատասխանի ընթացիկ բացահայտման և հաշվետվության պահանջներին, որոնք նկարագրված են ներքոնշյալ ժ) կետում և սույն հոդվածի 4-րդ կետում,
թ) անմիջապես զեկուցի համապատասխան մարմնին սույն Կանոնակարգի կամ ՖԻՖԱ-ի, կոնֆեդերացիայի կամ ՀՖՖ կանոնների, կանոնակարգերի կամ կանոնագրքերի խախտման մասին,
ժ) Հարթակ վերբեռնի՝

- Ներկայացուցչական համաձայնագրի կատարման, փոփոխման կամ լուծման 14 օրվա ընթացքում- համապատասխան Ներկայացուցչական համաձայնագիրը և Պլատֆորմով պահանջվող տեղեկատվությունը,
- կատարման 14 օրվա ընթացքում- Ներկայացուցչական համաձայնագրից զատ հաճախորդի հետ կնքած ցանկացած համաձայնագիր, որը ներառում, բայց չի սահմանափակվում այլ ծառայությունների մատուցման վերաբերյալ համաձայնագրերը և Հարթակով պահանջվող տեղեկատվությունը,
- ծառայության գումարի վճարման 14 օրվա ընթացքում- Հարթակով պահանջվող տեղեկատվությունը,
- ներկայացուցչական համաձայնագրից զատ հաճախորդի հետ կնքած ցանկացած համաձայնագիր ծառայության գումարի վճարման 14 օրվա ընթացքում- Հարթակով պահանջվող տեղեկատվությունը,
- տեղի ունենալուց հետո 14 օրվա ընթացքում-ծառայություններ մատուցելու վերաբերյալ համագործակցության կամ իրենց ծառայություններից ստացված եկամուտը կամ շահույթը կիսելու առումով Ֆուտբոլային Գործակալների միջև ցանկացած պայմանագրային կամ այլ պայմանավորվածություն,
- տեղի ունենալուց հետո 14 օրվա ընթացքում-ցանկացած տեղեկատվություն, որը կարող է ազդել իրավասության պահանջներին բավարարելու պարտավորության վրա,
- տեղի ունենալուց հետո 14 օրվա ընթացքում- հաճախորդի կամ այլ Ֆուտբոլային Գործակալի հետ կնքված ցանկացած կարգավորման համաձայնագիր:

ի) իրենց գործունեությունը Ֆուտբոլային Գործակալության միջոցով վարելու դեպքում Հարթակ վերբեռնի՝

- Գործակալության մասնակցությամբ առաջին գործարքը կնքելու 14 օրվա ընթացքում- կանոնադրությունը, բաժնետերերի/մասնակիցների ինքնությունը, մասնաբաժնի կապիտալի տոկոսը և/կամ իրական շահառուների ինքնությունը
- Գործակալության մասնակցությամբ առաջին Գործարքը կնքելու 14 օրվա ընթացքում-այն Ֆուտբոլային Գործակալների ընդհանուր թիվը, որոնք օգտվում են միևնույն Գործակալությունից իրենց գործունեությունն իրականացնելու համար և վերջինիս բոլոր աշխատակիցների անունները, և

- տեղի ունենալուց հետո 30 օրվա ընթացքում- Գործակալության վերաբերյալ նախկինում տրամադրված տեղեկատվության ցանկացած փոփոխություն:

3. Ֆուտբոլային Գործակալը չի կարող դրսևորել կամ փորձել դրսևորել հետևյալ վարքագիծը՝

ա) կապ հաստատել, բանակցությունների մեջ մտնել, քայլեր ձեռնարկել ցանկացած Անհատի նկատմամբ, աջակցել կողմերի միջև քննարկումների հաստատմանը՝ կապված Գործարքի հետ (այդ թվում՝ ԶԼՄ-ների համար հայտարարություններ անելը)՝ նպատակ ունենալով դրդել վերջիններիս վաղաժամկետ և առանց հիմնավոր դրդապատճառի լուծել աշխատանքային պայմանագիրը կամ խախտել աշխատանքային պայմանագրով սահմանված իրենց պարտավորությունները,

բ) ուղղակիորեն կամ անուղղակի ձևով առաջարկել կամ վճարել ցանկացած չվճարված անձնական, ֆինանսական կամ այլ եկամուտ,

- անդամ ասոցիացիայի, ակումբի կամ single-entity լիգայի ցանկացած պաշտոնյային կամ աշխատակցին՝ Ֆուտբոլային Գործակալի մատուցված ծառայությունների առնչությամբ,
- Անհատին (կամ ընտանիքի ցանկացած անդամին կամ օրինական ներկայացուցչին կամ տվյալ անհատի ընկերոջը)՝ տվյալ Ֆուտբոլային Գործակալի հետ կնքած Ներկայացուցչական համաձայնագրի առնչությամբ:

գ) Հաճախորդից թաքցնել էական փաստերը, այդ թվում առանց սահմանափակման՝

- շահերի բախման մասին չտեղեկացնելը (եթե նույնիսկ շահերի նման բախումը հակառակ պարագայում թույլատրելի կլիներ՝ համաձայն սույն Կանոնակարգի) կամ,
- Հաճախորդին արված գրավոր առաջարկի մասին չզեկուցելը (հաղորդակցման որևէ կապի միջոցով):

դ) շրջանցել Կանոնակարգով հաստատված ծառայության վճարի շեմը կամ ուղղակիորեն կան անուղղակի ձևով՝ օրինակ կամ առանց սահմանափակման միտումնավոր մեծացնելով հաճախորդից գանձված կամ այլ ծառայությունների համար գանձվելիք ծառայության վճարը

ե) ընդունել ցանկացած տրանսֆերային փոխհատուցում կամ մարզումային փոխհատուցում, որը վճարվում է ակումբների միջև ֆուտբոլիստի տեղափոխության հետ կապված: Սա ներառում է, առանց

սահմանափակման, ՀՖՖ Ֆուտբոլիստների կարգավիճակի և տեղափոխության կանոնակարգի հոդված 18² սահմանված իրավունքները

զ) ուղղակիորեն կամ անուղղակի ձևով ներգրավվել ՀՖՖ Ֆուտբոլիստների կարգավիճակի և տեղափոխության կանոնակարգով սահմանված կապակցված տրանսֆերի մեջ կամ տիրապետել ֆուտբոլիստի գրանցման իրավունքները՝ խախտելով ՀՖՖ Ֆուտբոլիստների կարգավիճակի և տեղափոխության կանոնակարգի հոդվածներ 18¹ և 18² -ը

է) որևէ այլ կերպ խախտել Կանոնակարգը:

4. Տվյալների բացահայտման և զեկուցման հետ կապված Ֆուտբոլային Գործակալը պետք է՝

ա) անմիջապես հաճախորդին տեղյակ պահի վերջինիս առնչությամբ ստացված գրավոր առաջարկի մասին (հաղորդակցության որևէ միջոցով),

բ) հարցման դեպքում Հաճախորդին տրամադրի համապատասխան Ներկայացուցչական համաձայնագրի կամ այլ ծառայությունների տրամադրման վերաբերյալ այլ գրավոր համաձայնագրերի պատճենը, աշխատանքային պայմանագրի կամ ֆուտբոլային ծառայությունների մատուցման վերաբերյալ ցանկացած այլ գրավոր փաստաթղթերի պատճենը, Ֆուտբոլային Գործակալին գործարքի առնչությամբ կատարված ցանկացած վճարումների ժամանակացույցը,

գ) հարցման դեպքում համագործակցել ՀՖՖ, կոնֆեդերացիայի, և/կամ ՖԻՖԱ համապատասխան մարմնի հետ՝ ցանկացած ձևով ցանկացած տեղեկատվության հարցման վերաբերյալ:

Հոդված 19. Համապատասխանելիություն արտոնագրման ընթացիկ պահանջներին

1. Ֆուտբոլային Գործակալի արտոնագիրը ժամանակավոր կասեցվում է, եթե վերջինս՝

ա) չի բավարարում իրավասության պահանջներին,

բ) Հարթակում նշված վերջնաժամկետում չի վճարում արտոնագրի տարեկան վճարը ՖԻՖԱ-ին,

գ) օրացուցային տարվա մեջ չի համապատասխանում Շարունակական մասնագիտական զարգացման պահանջներին կամ,

դ) չի կատարում հաշվետվությունների հետ կապված իր պարտավորությունները:

2. ՖԻՖԱ Գլխավոր քարտուղարությունը պատասխանատու է ուսումնասիրել սույն հոդվածի առաջին կետով սահմանված պահանջներին համապատասխանելիությունը:

3. Վերոնշյալ 1ա) կետի գործելու դեպքում՝

ա) ՖԻՖԱ Գլխավոր քարտուղարությունը ծանուցում կներկայացնի Ֆուտբոլային Գործակալին, որ առկա են հիմքեր առ այն, որ Գործակալը չի բավարարում իրավասության պահանջներին և, որ արտոնագիրը ժամանակավոր կասեցվում է, և որ

բ) հարցը կներկայացվի ՖԻՖԱ Կարգապահական կոմիտեին որոշում կայացնելու նպատակով:

4. Սույն հոդվածի 1բ), 1գ) կամ 1դ) կետերում նկարագրված մեկ կամ մի քանի հանգամանքների գործելու դեպքում՝

ա) ՖԻՖԱ Գլխավոր քարտուղարությունը ծանուցում կներկայացնի Ֆուտբոլային Գործակալին իրենց անհամապատասխանելիության և արտոնագիրը ժամանակավոր կասեցնելու վերաբերյալ,

բ) եթե Ֆուտբոլային Գործակալը չի շտկում իր անհամապատասխանելիության հանգամանքները արտոնագիրը ժամանակավորապես կասեցնելուց հետո 60 օրվա ընթացքում, ապա վերջինիս արտոնագիրը հետ է կանչվում:

Գլուխ IV. Հաճախորդների իրավունքներն ու պարտականությունները

Հոդված 20. Ֆուտբոլային Գործակալների ներգրավումը

1. Հաճախորդները՝

ա) կարող են ներգրավել Ֆուտբոլային Գործակալի համապատասխան ծառայություններ մատուցելու համար, եթե իհարկե իրենք չեն զբաղվում նման գործունեությամբ,

բ) պետք է վճարեն Ֆուտբոլային Գործակալի հետ համաձայնեցված ծառայության վճարը սույն Կանոնակարգով հաստատված սահմանված ժամկետում՝ համաձայն համապատասխան Ներկայացուցչական համաձայնագրի, աշխատանքային պայմանագրի և տրանսֆերային համաձայնագրի (եթե կիրառելի է) ,

գ) մինչև Ներկայացուցչական համաձայնագիրը ստորագրելը պետք է համոզվեն, որ Ֆուտբոլային Գործակալը համապատասխանաբար արտոնագրված է ՖԻՖԱ-ի կողմից,

դ) պետք է համագործակցեն ՀՖՖ, ՖԻՖԱ այլ անդամ ասոցիացիայի, կոնֆեդերացիայի և/ կամ ՖԻՖԱ-ի համապատասխան մարմնի հետ վերջիններիս կողմից Ֆուտբոլային Գործակալի վերաբերյալ կատարված հարցման առնչությամբ,

ե) կարող են պահանջել Ֆուտբոլային Գործակալից հաճախորդի կողմից կամ իրենց առչությամբ կատարված բոլոր տեսակի վճարումների (ներառյալ՝ բոլոր վարձատրությունները, վճարներն ու ծախսերը) ժամանակացույցը ,

զ) (ակումբների համար) պետք է տեղի ունենալուց հետո 14 օրվա ընթացքում ՖԻՖԱ Տրանսֆերների համադրման համակարգ (ՏՀՀ) վերբեռնեն՝

- ՏՀՀ-ով պահանջվող տեղեկատվությունը յուրաքանչյուր Գործարքի ավարտին, որը իրենից ներկայացնում է ակումբի մասնակցությամբ միջազգային տրանսֆեր,
- Ներկայացուցչական համաձայնագրում կատարված ցանկացած փոփոխություն կամ Ներկայացուցչական համաձայնագրի լուծարումը,
- Ֆուտբոլային Գործակալի հետ կնքած ցանկացած համաձայնագիր (քան Ներկայացուցչական համաձայնագիրն է), որը ներառում, բայց չի

սահմանափակվում այլ ծառայություններով, և ՏՀՀ-ով պահանջվող տեղեկատվությունը,

- Ֆուտբոլային Գործակալի հետ կնքած ցանկացած այլ համաձայնագրի (քան ներկայացուցչական համաձայնագիրն է) առնչությամբ կատարված վճարումներից հետո ՏՀՀ-ով պահանջվող տեղեկատվությունը:

է) պետք է անհապաղ զեկուցեն ՀՖՖ-ին ՖԻՖԱ-ին, կոնֆեդերացիաներին կամ ՖԻՖԱ այլ անդամ ասոցիացիաներինսույն Կանոնակարգի ցանկացած խախտման վերաբերյալ:

2. Հաճախորդները (և նրանց պաշտոնական ներկայացուցիչները, եթե կիրառելի է)՝ չպետք է դրսևորեն կամ փորձեն դրսևորել հետևյալ վարքագիծը՝

ա) ներգրավել կամ նշանակել չարտոնագրված անձին՝ Ֆուտբոլային Գործակալի ծառայություններ մատուցելու համար,
բ) Ֆուտբոլային Գործակալից ընդունեն կամ պահանջեն անհարկի անձնական, ֆինանսական կամ այլ առավելություն,
գ) ուղղակիորեն կամ անուղղակի ձևով Ֆուտբոլային Գործակալին (Ֆուտբոլային Գործակալի ցանկացած ընտանիքի անդամին կամ վերջինիս հետ կապված այլ անձին) տրամադրեն, առաջարկեն կամ փորձեն առաջարկել ցանկացած այլ տեսակի փոխհատուցում, քան համաձայնեցված ծառայության վճարն է ,
դ) անդամ ասոցիացիաների և ակումբների համար միջամտեն կամ ազդեն Ֆուտբոլային Գործակալ ընտրելու անհատի ազատ ընտրության վրա,
ե) ուղղակիորեն կամ անուղղակի ձևով մասնակցեն կամ օժանդակեն սույն Կանոնակարգով հաստատված ծառայության գումարի վճարումը շրջանցելուն,
զ) շահագրգռվածություն ունենալ գործակալության կամ Ֆուտբոլային Գործակալի գործունեության մեջ՝ համաձայն սույն Կանոնակարգի հոդված 13-ի 4-րդ կետի
է) անդամ ասոցիացիաների և ակումբների համար ուղղակիորեն կամ անուղղակի ձևով անհատին դրդեն կամ ստիպեն խախտել Ֆուտբոլային Գործակալի հետ կնքած Ներկայացուցչական համաձայնագրի պայմանները
ը) սույն Կանոնակարգի ցանկացած խախտման մասին անմիջապես չզեկուցեն ՖԻՖԱ-ին

թ) թույլատրել Ֆուտբոլային Գործակալին կամ վերջիններիս գործակալությանը իրենց նկատմամբ շահագրգռվածություն ունենալ, կամ

ժ) սույն Կանոնակարգի ցանկացած այլ խախտում:

Գլուխ V. Բացահայտում և հրապարակում

Հոդված 21. Բացահայտում և հրապարակում

1. ՖԻՖԱ-ն հասանելի է դարձնում՝

ա) բոլոր Ֆուտբոլային Գործակալների անուններն ու տվյալները,

բ) հաճախորդների տվյալները, որոնց ներկայացնում են Ֆուտբոլային Գործակալները, տվյալ ներկայացուցչության բացառիկությունը և ոչ այդքան բացառիկ լինելը և ներկայացուցչական համաձայնագրի գործողության ավարտի ժամկետը,

գ) յուրաքանչյուր հաճախորդին մատուցվող Ֆուտբոլային Գործակալի ծառայությունները,

դ) Ֆուտբոլային Գործակալների և հաճախորդների նկատմամբ կիրառված ցանկացած պատժամիջոցներ,

ե) Ֆուտբոլային Գործակալների ներգրավվածությամբ կատարված գործարքների բոլոր մանրամասները՝ ներառյալ Ֆուտբոլային Գործակալներին վճարված ծառայության վճարի գումարները։

Գլուխ VI. Վեճեր

Հոդված 22. Իրավասություն

1. Չխախտելով Ֆուտբոլային Գործակալի կամ Հաճախորդի ընդհանուր իրավասության դատարանի առջև փոխհատուցում հայցելու իրավունքը, ՖԻՖԱ-ի Ֆուտբոլային տրիբունալի գործակալների պալատը իրավասու է լուծել հետևյալ վեճերը՝

   ա) համաձայնագրից բխող կամ Ներկայացուցչական համաձայնագրի հետ կապված միջազգային ուղղվածության վեճերը (տե՛ս սույն Կանոնակարգի հոդված 2-ի 2-րդ կետը),
   բ) այն վեճերը, որտեղ հայցը ներկայացվում է՝ համաձայն Ֆուտբոլային տրիբունալը կառավարող ընթացակարգային կանոնների,
   գ) այն վեճերը, որտեղ վեճի ծագելու պահից անցել է ոչ ավել քան երկու տարի. սույն ժամկետի կիրառումը պետք է քննվի յուրաքանչյուր դեպքում ի պաշտոնե:

2. Վեճերի լուծման մանրամասն ընթացակարգերը ներկայացված են Ֆուտբոլային տրիբունալը կառավարող ընթացակարգային կանոններում:
3. Չխախտելով Ֆուտբոլային Գործակալի կամ Հաճախորդի ընդհանուր իրավասության դատարանի առջև փոխհատուցում հայցելու իրավունքը՝ համաձայնագրից բխող կամ ներկայացուցչական համաձայնագրի հետ կապված միջազգային ուղղվածություն չունեցող վեճերի լուծման իրավասությունը պատկանում է ՀՖՖ Վեճերի լուծման պալատին (տե՛ս սույն Կանոնակարգի հոդված 2-ի 3-րդ կետը):

Գլուխ VII. Կարգապահական հարցեր

Հոդված 23. Իրավասություն և գործադրում

1. ՖԻՖԱ-ի Կարգապահական կոմիտեն և, անհրաժեշտության դեպքում, անկախ Էթիկայի կոմիտեն իրավասու են պատժամիջոցներ կիրառել ցանկացած Ֆուտբոլային Գործակալի կամ հաճախորդի նկատմամբ, ով խախտել է սույն Կանոնակարգը, ՖԻՖԱ կանոնադրությունը կամ ցանկացած այլ ՖԻՖԱ կանոնակարգը, ՖԻՖԱ Կարգապահական կանոնագիրքը և ՖԻՖԱ Էթիկայի կանոնագիրքը: ՖԻՖԱ-ն իրավասություն ունի՝

   ա) միջազգային ուղղվածություն ունեցող ներկայացուցչական համաձայնագրի հետ կապված ցանկացած վարքագծի առումով (տե՛ս հոդված 2-ի 2-րդ կետը) կամ
   բ) միջազգային տրանսֆերի կամ գործարքի հետ կապված ցանկացած վարքագծի առումով:

2. ՖԻՖԱ Գլխավոր քարտուղարությունը վերահսկում է համապատասխանելիությունը սույն Կանոնակարգին: Մասնավորապես՝

   ա) Ցանկացած կողմ, ով տեղեկատվության տրամադրման ծանուցում է ստանում, պետք է համագործակցի՝ տրամադրելով հարցված փաստաթղթերը, տեղեկատվությունը կամ ցանկացած տեսակի այլ նյութերը, որոնք գտնվում են տրամադրության տակ, ինչպես նաև իր տրամադրության տակ չգտնվող փաստաթղթերը, տեղեկատվությունը կամ ցանկացած տեսակի այլ նյութերը, որոնք կողմն իրավասու է ստանալ: ՖԻՖԱ-ի նշված հարցումներին չարձագանքելու և չկատարելու դեպքում, ՖԻՖԱ Կարգապահական կոմիտեն կարող է կիրառել համապատասխան պատժամիջոցներ: ՖԻՖԱ Գլխավոր քարտուղարության հարցման դեպքում, տրամադրվում է փաստաթուղթ կամ քաղվածք՝ անգլերեն, ֆրանսերեն կամ իսպաներեն լեզուներով:
   բ) Հարթակով կամ ՏՀՀ-ով ստացված կամ Հարթակում կամ ՏՀՀ-ում տրամադրված էլեկտրոնային հասցեին ուղարկված էլեկտրոնային ծանուցումները համարվում են կապի վավեր միջոց և բավարար կհամարվեն ժամկետներ սահմանելու համար:
   գ) Համապատասխան հետաքննությունից հետո, ՖԻՖԱ Գլխավոր քարտուղարությունը կարող է սույն Կանոնակարգին

անհամապատասխանության դեպքերը ուղարկել ՖԻՖԱ Կարգապահական կոմիտե՝ համաձայն ՖԻՖԱ Կարգապահական կանոնագրքի։

դ) Համապատասխան հետաքննությունից հետո, ՖԻՖԱ Գլխավոր քարտուղարությունը կարող է սույն Կանոնակարգի առնչությամբ բարոյական սխալ վարքագծի դեպքերը ուղարկել էթիկայի անկախ կոմիտե՝ համաձայն ՖԻՖԱ էթիկայի կանոնագրքի։

3. ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեն իրավասու է պատժամիջոցներ կիրառել ցանկացած Ֆուտբոլային Գործակալի կամ հաճախորդի նկատմամբ, ով կխախտի ՀՖՖ կանոնադրությունը, ՀՖՖ Ֆուտբոլային Գործակալների կանոնակարգը և ՀՖՖ այլ կանոնակարգեր։ ՀՖՖ-ն իրավասություն ունի՝

ա) միջազգային ուղղվածություն չունեցող (ազգային մակարդակի) ներկայացուցչական համաձայնագրի հետ կապված ցանկացած վարքագծի առումով (տե՛ս հոդված 2-ի 3-րդ կետը) կամ

բ) ներքին տրանսֆերի կամ գործարքի հետ կապված ցանկացած վարքագծի առումով։

4. ՀՖՖ Գլխավոր քարտուղարությունը վերահսկում է սույն Կանոնակարգի պահպանման գործընթացը։ Մասնավորապես.

ա) Որևէ կողմ, որը ստանում է տեղեկատվություն ներկայացնելու ծանուցում, պարտավոր է լիարժեքորեն համագործակցել՝ ողջամիտ ժամկետներում ծանուցման դեպքում ապահովելով ցանկացած փաստաթղթի, տեղեկատվության կամ այլ բնույթի նյութի տրամադրում, որոնք գտնվում են իր տրամադրության տակ, ինչպես նաև ապահովել և ներկայացնել այն փաստաթղթերը, տեղեկատվությունը կամ նյութերը, որոնք չունի տվյալ կողմը, սակայն իրավասու է ձեռք բերելու։ ՀՖՖ Գլխավոր քարտուղարությունից ստացված նման հարցումներին չհետևելը կարող է հանգեցնել ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի կողմից պատասխանատվության միջոցների կիրառմանը։ ՀՖՖ Գլխավոր քարտուղարության պահանջով փաստաթուղթը (կամ դրա հատվածը) պետք է ներկայացվի ՀՖՖ պաշտոնական լեզվով։

բ) ՀՖՖ-ի ֆուտբոլային կառավարման համակարգի (Football Management System) միջոցով կամ ՀՖՖ-ի պաշտոնական էլ. փոստի, ինչպես նաև ՏՀՀ-ի

(TMS) միջոցով կատարված էլեկտրոնային ծանուցումները համարվում են վավեր հաղորդակցության միջոց և բավարար են ժամկետների սահմանման համար:

գ) Քննչական գործընթացի ավարտից հետո ՀՖՖ Գլխավոր քարտուղարությունը կարող է սույն Կանոնակարգի հետ կապված էթիկական խախտումների դեպքերը փոխանցել անկախ Կարգապահական և Էթիկայի կոմիտեին՝ ՀՖՖ Կարգապահական և Էթիկայի կանոնակարգի համաձայն:

Գլուխ VIII. Եզրափակիչ դրույթներ

Հոդված 24. Անցումային դրույթներ

1. Ներկայացուցչական համաձայնագրերը, որոնք դադարում են 2023թ. հոկտեմբերի 1-ին կամ դրանից հետո՝ այն պահի դրությամբ, երբ սույն Կանոնակարգը հաստատվում է, չնայած այն հանգամանքին, որ նրանք չեն բավարարում Կանոնակարգի հոդված 14-ի 7-րդ կետով սահմանված նվազագույն պահանջներին, շարունակում են մնալ վավեր (բայց չեն երկարաձգվում) մինչև դադարեն:
2. Ցանկացած նոր ներկայացուցչական համաձայնագիր կամ ներկայացուցչական համաձայնագրերի թարմացումները, որոնք կնքվել են սույն Կանոնակարգի հաստատումից հետո, պետք է համապատասխանեն սույն Կանոնակարգին սկսած 2023թ. հոկտեմբերի 1-ից:
3. Անձը, ով կնքել է նման ներկայացուցչական համաձայնագիր, պետք է ստանա արտոնագիր՝ համապատասխան սույն Կանոնակարգի դրույթների, որպեսզի կարողանա Ֆուտբոլային Գործակալի Ծառայություններ մատուցի սկսած 2023թ. հոկտեմբերի 1-ից:

Հոդված 25. Նախկինում արտոնագրված գործակալներ

1. ՖԻՖԱ Ֆուտբոլային Գործակալների կանոնակարգերի (1991թ., 1995թ., 2001թ. կամ 2008թ. խմբագրություն) համաձայն նախկինում որպես գործակալ արտոնագրված անձն ազատվում է սույն Կանոնակարգով սահմանված կարգով քննություն հանձնելու պարտավորությունից, եթե

   ա) վերջիններս արտոնագրման դիմում են ներկայացնում սույն Կանոնակարգի համաձայն՝ մինչև 2023թ. սեպտեմբերի 30-ը ներառյալ,

   բ) ապացույց են ներկայացնում, որ նրանք արտոնագրվել են որպես գործակալ՝ համաձայն ՖԻՖԱ Ֆուտբոլային Գործակալների կանոնակարգերի (1991թ., 1995թ., 2001թ. կամ 2008թ. խմբագրություն),

   գ) արտոնագրման դիմում ներկայացնելու դրությամբ նրանք համապատասխանում են սույն Կանոնակարգի հոդված 5-ով սահմանված իրավասության պահանջներին,

   դ) դիմումի հետ միասին նրանք ապացույց են ներկայացնում, որ գրանցված են եղել որպես միջնորդ կամ եղել են այն իրավաբանական անձի սեփականատերը, տնօրենը կամ աշխատակիցը, որը գրանցված է եղել

ՀՖՖ-ում որպես միջնորդ 2015թ. ապրիլի 1-ից մինչև սույն Կանոնակարգի ուժի մեջ մտնելու ժամանակահատվածի ընթացքում՝ համաձայն ՀՖՖ Միջնորդների հետ աշխատելու վերաբերյալ կանոնակարգի կամ ՀՖՖ Ֆուտբոլային Գործակալների կանոնակարգի,

ե) ՖԻՖԱ-ի կողմից քննությունից ազատվելու հաստատումը ստանալուց հետո, նրանք համապատասխանում են սույն Կանոնակարգի հոդված 7-ին:

2. Եթե նախկինում արտոնագրված գործակալը բավարարում է նշված պահանջներին, ապա վերջինս ստանում է արտոնագիր՝ համաձայն սույն Կանոնակարգի հոդված 8-ի: Նրանք հետագայում ևս կենթարկվեն սույն Կանոնակարգով սահմանված ընթացիկ արտոնագրման պահանջներին՝ բացառությամբ, որ իրենցից կպահանջվի ձեռքբերել որոշակի քանակությամբ կրեդիտներ Շարունակական մասնագիտական զարգացման օրացուցային տարվա համար 5 տարի շարունակ, ինչպես նշված է տարեկան շրջաբերական նամակում:
3. ՖԻՖԱ Գլխավոր քարտուղարությունը պատասխանատու է սույն հոդվածի առաջին կետին համապատասխանությունը ուսումնասիրելու համար:

Հոդված 26. Ազգային օրենսդրության արտոնագրման համակարգերի ճանաչում

1. Ազգային օրենսդրության համաձայն ստեղծված սպորտային գործակալների արտոնագրման համակարգը, որը թույլատրում է տվյալ երկրում կամ երկրի տարածքում անհատին մատուցել Ֆուտբոլային Գործակալների ծառայություններին համարժեք ծառայություններ, կարող է ճանաչվել ՖԻՖԱ-ի կողմից, որը հաստատում է՝

ա) բոլոր դիմորդների և արտոնագրվողների համար իրավասության պահանջները,

բ) դիմորդների համար քննությունը հաջողությամբ հանձնելու պահանջը, որը ներառում է ֆուտբոլային կանոնակարգերին վերաբերող հարցերը կամ այլ կրթական պահանջներ:

2. Ազգային օրենսդրության համաձայն ստեղծված սպորտային գործակալների արտոնագրման համակարգը ճանաչելու նպատակով ՖԻՖԱ-ին ուղարկված դիմումը պետք է Հարթակի միջոցով ուղարկվի ՖԻՖԱ Գլխավոր քարտուղարություն ՀՖՖ կողմից, որտեղ կիրառվում է նման համակարգը:

3. Սույն հոդվածի առաջին կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում Ֆուտբոլային Գործակալի Ծառայություններին համարժեք ծառայություններ մատուցելու համար արտոնագրված անհատը ազատված է սույն Կանոնակարգով սահմանված քննությունը հանձնելու պարտավորությունից, եթե

ա) ՀՖՖ-ն ճանաչվում է ՖԻՖԱ-ի կողմից՝ համաձայն սույն հոդվածի 2-րդ կետի,

բ) տվյալ անձը ապացույց է ներկայացնում առ այն, որ նա արտոնագրված է եղել տվյալ ՀՀ-ում Ֆուտբոլային Գործակալի Ծառայություններին համարժեք ծառայություններ մատուցելու համար՝ համաձայն սույն հոդվածի առաջին կետի մինչև սույն Կանոնակարգի ուժի մեջ մտնելը (տե՛ս սույն Կանոնակարգի հոդված 28-ի 1ա) կետը)

գ) դիմումը ներկայացնելիս վերջինս համապատասխանում է սույն Կանոնակարգի հոդված 5-ով սահմանված իրավասության պահանջներին,

դ) վերջինս համապատասխանում է սույն Կանոնակարգի հոդված 7-ին։

4. Եթե սույն հոդվածի 3-րդ կետի համաձայն դիմորդը բավարարում է համապատասխան պահանջներին, նրան շնորհվում է արտոնագիր՝ համաձայն սույն Կանոնակարգի հոդված 8-ի։ Նրանք հետագայում ևս կենթարկվեն սույն Կանոնակարգով սահմանված ընթացիկ արտոնագրման պահանջներին՝ բացառությամբ, որ իրենցից կպահանջվի ձեռքբերել որոշակի քանակությամբ կրեդիտներ Շարունակական մասնագիտական զարգացման օրացուցային տարվա համար 5 տարի շարունակ, ինչպես նշված է տարեկան շրջաբերական նամակում։

5. ՖԻՖԱ Գլխավոր քարտուղարությունը պատասխանատու է սույն հոդվածի համաձայն ներկայացված ցանկացած դիմում քննարկելու և որոշելու հարցում։

Հոդված 27. Ֆուտբոլային Գործակալների աշխատանքային խումբ

1. ՖԻՖԱ-ն կստեղծի Ֆուտբոլային Գործակալների աշխատանքային խումբ՝ բաղկացած պրոֆեսիոնալ ֆուտբոլի շահագրգիռ կողմերի ներկայացուցիչներից և գործակալների կազմակերպություններից։

2. Ֆուտբոլային Գործակալների աշխատանքային խումբը հանդես կգա որպես մշտական խորհրդատվական մարմին՝ Ֆուտբոլային Գործակալներին առնչվող հարցերի կապակցությամբ։

Հոդված 28. Չնախատեսված հարցեր

1. Սույն Կանոնակարգով չսահմանված հարցերը որոշվում են ՀՖՖ Գլխավոր քարտուղարության կողմից:
2. Սույն Կանոնակարգի վրա ազդող ֆորս-մաժորային դեպքերը որոշվում են ՀՖՖ Գործադիր կոմիտեի կողմից, որոնց որոշումը վերջնական է:

Հոդված 29. Պաշտոնական լեզուներ

1. Եթե տարբեր լեզուներով հրապարակված կանոնակարգերի տեքստերի միջև առկա է տարաձայնություն, ապա գերակայում է անգլերեն տարբերակը:

Հոդված 30. Ուժի մեջ մտնելը

1. Սույն կանոնակարգը հաստատվել է ՀՖՖ Գործադիր կոմիտեի կողմից 30.06.2025թ.-ին և ուժի մեջ է մտնում հաստատման պահից սկսած: